ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՅԳԵՎԱՆԻ

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

АРМАВИРСКИЙ МАРЗ

МУНИЦИПАЛИТЕТ

С. АЙГЕВАН

N 46

«05» ------08------2013թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ

պարոն Ա.Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Կից Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Այգևան գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի հուլիսի 29-ի թիվ 5 արտահերթ նիստի արձանագրությունները:

Առդիր թերթ

Այգևան համայնքի ղեկավար Ս.Էքիզյան

4490-13

14. 08 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 5 ԱՐՏԱՀԵՐԹ ՈՐՈՇՈՒՄ

---

29 հուլիսի 2013թ.

## 12.ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Այգեվան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվան գյուղական համայնքի ավագանու 2013թ. -ի հուլիսի 29-ի թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

ԿՈՂՄ

1. Սարգսյան Մարինե
2. Սահակյան Պարգև
3 Քեսաբյան Ալեքսանդր
4 Ամիրխանյան Գագիկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԷՔԻԶՅԱՆ

2013 թվականի հուլիսի 29
գ. Այգեվան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեվան գյուղական
համայնքի ավագանու 2013թ հուլիսի 29-ի
Թիվ 2 արտահերթ նիստի

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Թիվ-5 արտահերթ նիստ 29.07.2013թ. ժամը՝ $11^{00}$

13.2013թվականի կարկտահարումից տուժած համայնքների դրամական օգնություն տրամադրելու մասին:

/Զեկ. Ս. Էքիզյան/

14. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքն ուղղակի կարգով վաճառելու մասին:

/Զեկ. Ս. Էքիզյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 5 ԱՐՏԱՀԵՐԹ ՈՐՈՇՈՒՄ

«_29___» հուլիսի 2013թ.

13. 2013թվականի կարկտահարումից տուժած համայնքների բնակիչներին դրամական օգնություն տրամադրելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ավագանին միաձայն

ՈՐՈՇԵՑ՝

1. 2013թվականի կարկտահարումից տուժած համայնքների բնակիչներին տրամադրել դրամական օգնություն 200000 (երկու հարյուր հազար )դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԿՈՂՄ

1. Սարգսյան Մարինե
2. Սահակյան Պարգև
3 Քեսաբյան Ալեքսանդր
4.Ամիրխանյան Գագիկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԷՔԻԶՅԱՆ

2013 թվականի հուլիսի 29
գ. Այգեվան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 5 ԱՐՏԱՀԵՐԹ ՈՐՈՇՈՒՄ

---

«_29___» հուլիսի 2013թ.

14. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքն ուղղակի վաճառքի կարգով վաճառելու մասին ։ Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 12 ապրիլի 2001 թվականի N286 որոշմամբ հաստատված կարգի 20-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը .

Ավագանին որոշում է

1.Թույլատրել Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով չծանրաբեռնված համայնքի սեփականություն հանդիսացող 5-րդ փողոց 1-ին նրբանցք 7 հասցեում գտնվող 04-062-0013-0007 ծածկագրի 0.0965 հա. հողամասն արտադրության ընդլայման նպատակով ուղղակի վաճառքի ձևով վաճառել «Հոկտեմբերյանի գինու կոնյակի գործարան» փակ բաժնետիրական ընկերությանը , քանի որ այն փաստացի օգտագործվում է ընկերության կողմից և չի կարող որպես առանձին միավոր անուրդով օտարվել՝ իր աշխարհագրական դիրքից ելնելով , ինչպես նաև հարակից սեփականատեր ընկերությանը առանց վնաս պատճառելու:
2.Վաճառվող հողամասի 1 քառակուսի մետրի գինը սահմանել 222 (երկու հարյուր քսաներկու)դրամ
3.Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և համայնքի ավագանու կողմից հաստատված կանոնակարգին համաձայն:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԿՈՂՄ

1. Սարգսյան Մարինե ------------------

2. Սահակյան Պարգև ------------------

3. Քեսաբյան Ալեքսանդր ------------------

4. Ամիրխանյան Գագիկ ------------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԷՔԻՋՅԱՆ

2013 թվականի հուլիսի 29

գ. Այգեվան